

Ռ Ռ Ի Ս Ա Ս Տ Ա Ն

Հայաստան կ'ողջունէ Ատրպէյնանի Անդամակցութիւնը ԱՊՀին ✓

Սեպտեմբեր 11ին Մոսկուա մէջ, կայացած է նախագահներ Լեւոն Տէր Պետրոսեանի եւ Պորիս Ելցինի հանդիպումը, որ



տեւած է 45 վայրկեան: Հանդիպումէն յետոյ Հայաստանի նախագահը 3 խնդիրներու վերաբերեալ հաղորդում մը կատարած է:

1.- Ղարաբաղեան խնդրի կարգաւորման հարցը:

Մենք շատ հանգամանօրէն ֆննարկեցին այդ խնդրի լուծման ուղիները եւ համաձայնեցանք, որ գլխաւորը միջազգային կազմակերպութիւններու ջանքերուն համակարգումն է այդ տարածֆաշրջաններուն մէջ:

2.- Ռուբլիի գօտի:

Հայաստանը արդէն վերջնական որոշում ընդունած է այդ առընչութեամբ, այն միացած է ան համաձայնութիւններուն, որոնց ԱՊՀի պետութիւնները Ռուսաստանի հետ ստորագրած են: Ես բաւարարուած եմ այդպիսի որոշմամբ:

3.- Յառաջիկայ ձմեռը Հայաստանի համար:

Մենք տրամադրուած էինք որ այն շատ աւելի թեթեւ կ'ըլլայ նախորդ ձմեռէն եւ բաւական գործ արդէն կատարւած, բայց դրութիւնը բարդացած է Վրաստանի իրավիճակի սրման առընչութեամբ: Մենք որոշ լուծումներ ֆննութեան տակ առած ենք: Յոյսով եմ, որ ամէն ինչ լաւ կ'ըլլայ:

Պատասխանելով հայկական հեռուստատեսութեան այն հարցին, թէ ինչ որոշակի պայմանաւորուածութիւններ ձեռք բերուած են ձմրան վերաբերեալ, ան ըսած է, թէ որոշակի պայմանաւորուածութիւններ չեն բերուած: «Հարցը սկզբունքօրէն դրուած է, իսկ մենք յանգած ենք այն բանին որ Ռուսաստանը ամէն ինչին կ'ընդառաջէ»: Պատասխանելով «Հայուր»ի այն հարցին, թէ ի՞նչ դիրք կը գրաւեն Հայաստանն ու Ռուսաստանը ԱՊՀի մէջ Ատրպէյնանի անդամակցութեան առընչութեամբ, Հայաստանի նախագահը նշած է, որ Ատրպէյնանի ներքին խնդիրն է, բայց եւ այնպէս իրենք շօշափած են այդ հարցը եւ համաձայնած, որ Ռուսաստանը եւ Հայաստանը ողջունեն Ատրպէյնանի նման ցանկութիւնը: «Հայուր»ի միւս հարցին, թէ ի՞նչ կը մտածէ նախագահը Հայտար Ալիի ի այն յայտարարութեան առընչութեամբ, որ ինքը մինչեւ Կարէն Բաբուրեանի հետ հանդիպման մասին խօսիլը, նախ պէտք է հանդիպի Լեւոն Տէր Պետրոսեանին հետ. նախագահը պատասխանած է «Ես միշտ պատրաստ եմ հանդիպելու Հայտար Ալիեւին հետ եւ դուք գիտէք, որ երկու տարուայ ընթացքին, երբ ան Նախիջեւանի Գիսի նախագահին էր, մենք շփումներ ունեցած ենք եւ բոլորին յայտնի է, որ հայ - նախիջեւանեան սահմանին վրայ միշտ ալ շատ աւելի հանգիստ եղած է, քան Ատրպէյնանի հետ Հայաստանի սահմաններու միւս տեղամասերը: Ուստի եւ միշտ պատրաստ եմ Ալիեւին հետ ֆննարկելու ցանկացած խնդիրներ, բայց երբ խօսքը կը վերաբերի զարաբաղեան խնդրի կարգաւորման, ապա այստեղ առանց Պաֆու - Ստեփանակերտ երկխօսութեան գործը զլուխ չ'ելլեր»: Ան մատնանշած է Ատրպէյնանի եւ Լեւոնային Ղարաբաղի միջեւ ուղղակի երկխօսութիւն սկսելու կարեւորութիւնը, այն անուանելով խնդրի կարգաւորման միակ եւ ամէնէն կարն ուղին: «Այլ նախապարհ չկայ: Եթէ բոլոր շահագրգիռ կողմերը գիտակցին այդ փաստին, կը կարծեմ, որ մենք կը գտնենք այդ հարցի լուծման բանալին»: